

լանք 'ի գործ կը դնեն մեծաւորք՝ որ ընտրեալ անձինք ընդունուին, վասն զի այնպիսի պաշտօն մը պիտի յանձնուի՝ որ 23 տարեկան կուրովի երիտասարդներն անգամ շուտով կը ծերացնէ, և միշտ աչաց առջև պիտի ունենայ անձին վտանգը:

Ընդարձակ քաղաքին ըստ եղանակի վաճառականական շարժման առաւելութեան կամ նուազութեան համեմատ՝ բնականաբար կ'առաւելուն և կը նուազին նաև պաշտօնեայք: Ամէն տարի այս ոստիկանութեան բանակին մէջ՝ միջին հաշուով 800 — 1000 նոր պաշտօնեայք կ'ընդունուին: Այս նորեկք ըստ կանոնի երեք շաբաթ կրթութենէ և փորձէ վերջը՝ իբրև ոստիկանութեան պաշտօնեայ կրնան մաս կազմել նոյն բանակին:

Այն ատեն իր պաշտօնին մէջ կը սկսի իրական փորձն 'ի գործադրութեան և ընդհանրապէս գործակատարաց մին կը վարժեցնէ զինքը: Ընկերակցութեամբ բազմափորձ պաշտօնէի մը՝ կ'սկսի պտոյտներ ընել քաղաքին այլ և այլ թաղերունմէջ: Նախ և առաջ իր շաբաթականն է 24 շիլլին (30 ֆռ.). երեք տարի վերջը կ'ըլլայ 27 շիլլին. 5 տարի վերջը 30 շիլլին (37.50 Ս.) աւելի յառաջագէժք տարեկան 88 — 100 սդեռլին կ'առնուն. գործակատարք 117 — 162 սդեռլին. իսկ հրամանատարք 350 — 400 սդեռլին. սակայն անգղիական ոստիկանութեան ընդունած վարձքը համեմատութեամբ նոր-եօրքի ոստիկանութեան պաշտօնէից ընդունածին՝ շատ նուազ է. այս քաղաքին մէջ իւրաքանչիւր պաշտօնեայ կ'ընդունի 1000—1200 տոլլար (5—6000 ֆռ.), գործակատարք 2000 տոլլար. բարձրագոյն պաշտօնեայք 2750 տոլլար. իսկ հրամանատարք 3500 տոլլար (17,500 ֆռ.):

Լոնտրայի ոստիկանութեան «օրը» կը սկսի առաւօտեան 6էն մինչև երեկոյեան 10ը, իսկ «գիշերը» գիշերուան 10էն մինչև առաւօտեան 6ը. ծառայութեան ժամերը փոփոխական են ըստ պարագայից: Որական ծառայութիւնը կը կայանայ երկու շրջանէ, իւրաքանչիւրը չորս չորս ժամ: Գիշերային ծառայութիւնն ալ անընդհատ 8 ժամ է. այս գիշերային ծառայութիւնը՝ մանաւանդ ձմեռը շատ անտանելի է, ուստի զայն մեղմացնելու համար ամէն միշոց 'ի գործ գըրուած է:

## ՈՍԿԻ

Ամերիկեան ուսումնասիրութ մը (North American Review) մատերս հետաքրքրական հատուած մը հրատարակեց, յորում քննութեան կ'առնուր թէ արդեօք կարելի է արուեստական միջոցներով ոսկւոյ ստացումն, և եթէ կարելի լինէր՝ ինչ հեռեանքներ, յառաջ կրնար գալ անկէ: Տարրաբանական ուսման ի վեր քան զմիտս ը-

րած յառաջագիմութեան արգեանց նայելով, կարծես թէ պիտի ըստուգի Հոֆմանի այս խօսքը թէ Աստուծոյ և տարրաբանից համար ամենայն ինչ կարելի է :

Ահաւասիկ նոյն ուսումնաթերթին խօսքը՝ զոր հաւտաարմարար թարգմանելով աստ կը գնենք, « Նիւլէնտի (Newlands) և Մէնտէլէ-յէֆի (Mendelejeff) և Մէյերի (Meyer) յաջողակ գիւտերով բոլոր աշխարհ ճանչցաւ որ տարրաբանական տարերաց հիւլէից խումբերը՝ յորոց կը բաղկանան ամենայն ինչ, հաստատուն և անփոփոխ դիրք մը կը բռնեն երկրաչափական ձևի մը մէջ, այնպէս որ նիւթոց յատկութիւններն կրնանք համարիլ մաթեմատիքական թուոց տեղ : Այս գիւտերը՝ ուսումնական հետազոտութեան հանաբեր երկիր մը ցուցին, յորում այնչափ դանձ ծածկեալ կայ որ մարդ չկրնար եւրեակայել, Վելսբախ (Welsbach) հետեւելով այս հետազոտութեանց արգասաբեր գիւտին, բաժնեց դիդիմ մետաղը երկու տարերաց, ապացուցնելով այսու, ինչպէս շատ ժամանակ առաջ ըսած են քանի մը տարրագէտք, որ մետաղներէն ոմանք կրնան վերածուիլ աւելի պարզ տարերաց՝ թէ որ ունենայինք առ ձեռն պատրաստ կարեւոր եղած միջոցները, և իբրեւ յետին ապահովութեան փորձ դարձեալ միացուց երկու տարերքը որ կը կոչուին հնադիդիմ և նոքա դիդիմ ի մի որ կը կոչուի Գիդիմ : Գրուք (Crookes) երեսի տարրաբանը՝ գրեթէ մը հրատարակեց իւր ըրած զարմանալի փորձերուն, յորում կը պատմէ թէ ինչպէս կրցաւ բաժնել իտրոն մետաղը այլ և այլ տարերաց, և զորոնք դարձեալ միացնելով կազմեց նոյն մետաղը, յոր և նման առաջնոյն : Ասոնյմէ վերջը եկաւ Գրունվալդ (Grünwald) որ իրեն լուսապատկերացոյց գործիով աշխատող թեանց իբր հետեանք ապացուցուց որ մեր երկրագնդիս ամէն տարերքը կրնան վերածուիլ երկու նախնական և պարզագոյն և միակ տարերաց :

Արդ հետախուզութեանց ասպարէզը այսչափ ընդարձակ լինելով, չենք կրնար չափ մը դնել նորանոր գիւտից որ հետեապէս յառաջ կուգան անկից : Մեր կարողութիւնը օր օրուան վրայ նորանոր գիւտերու շնորհիւ և ևս կը կրկնապատկի : Միով բանիւ, այս ամէն բանով կը տեսնուի թէ տարրաբանական տարերք կոչուածներն ըստուգիւ տարերք չեն, այլ բաղադրեալ մարմիններ, և զորս ո՞ գիտէ ժամանակաւ պիտի կարենանք լուծել և վերլուծել : Այն ժանր մարմնոց կարգին մէջ որք կը յուսացուին թէ պիտի կարենան լուծուիլ տարրագիտին քուրային մէջ՝ է նաև Ոսկին : Պէտք չէ անհաւանական և խոտելի համարիլ թէ գուցէ ժամանակաւ պիտի կարենայ մարդս արուեստիւ ոսկի շինել մեծ քանակութեամբ, որով պիտի նուազի յարգը և պիտի դադրի այլ ևս արժէից չափ լինելէն : Երկու տեսակիտով այս բանս մարդկութեան օգտակար է : Նախ որ ոսկին

իւր յատկութեանց համար արուեստից զարգացման անհրաժեշտ պէտք է . և երկրորդ, այս բանէն քաղաքականութեան՝ բարոյականի վրայ տեսնուելիք արդիւնքը: Գալով առաջին, յայտնի է որ ոսկին մետաղ մ'է որ շատ արուեստից օգտակար կրնար լինել, որովհետեւ ոչ օգոյ և ոչ յրոյ մէջ կը թթուակի կամ կը ժանգոտի, և միշտ անալլայակ և փայլուն կը մնայ, և դարձեալ ուրիշ մետաղաց հետ սքանչելի յարազօգնեւր կը կազմէ և զանոնք կ'ազնուացընէ, և այսպէս մարդկութիւնը նոյն ժամանակ ոսկիէն աւելի օգուտ պիտի քաղէր քան այժմ որ ուրիշ բանի չի ծառայեր, բայց եթէ զարդաբանաց և արժէից չափի:

Երկրորդ տեսակէտը ամենուն յաջուն կը դաչի: Գիտենք որ բոլոր աշխարհիս մէջ իրի մը արժողութիւնը գտնուելու համար մէկէն կամ ոսկւոյ և կամ ուրիշ յարգի մետաղի մը բաղադատութեան կը դիմենք, որովհետեւ այն մետաղներն են միայն որ աւելի կամ պակաս այս երեք յատկութիւնները, այսինքն է օգտակարութիւն, սակաւութիւն և գեղեցկութիւն միատեղ ունին, և ասոնց մէջ ոսկին վերադաս է քան զամենեւին: Իսկ եթէ կտրենանք ըստ կամայ չինել արուեստի, իւր այս յատկութեանց զլուստրացոյնն՝ որ է սակաւութիւն, պիտի կորսուինցընէ, որով և այլ ևս պիտի չի լինի արժէից չափ:

Այժմեան մեր այս արժէից գին կտրելու եղանակն ունի մեծամեծ անտեղութիւններ. որովհետեւ շատ անգամ բան մը որ ըստ ինքեան միջոց մը պիտի լինէր առ վախճանն հասնելու, կը փոխէ զայն և կ'ընէ իբր վախճան, և հարստութիւն գիղելու ճամբայ կը բանայ: Ապրելու համար ոսկի պէտք է ունենալ, և զայն ստանալու համար պէտք է աշխատիլ. ահաւասիկ ամենին յարաբերութիւն մը չկայ աշխատութեան և ոսկւոյ մէջ:

Որ և իցէ իր որուն չկտրենանք ոսկւով արժէք մը կտրել, անգին բան մը կը համարուի, թէպէտ և մեզի համար մեծ արժէք մը կրնայ ունենալ. ուստի ոչ թէ նիւթն է որ ըստ ինքեան կ'արժէ, այլ ոսկւոյ փոփոխութիւնն է որ զայն արժեցընել կուտայ: Փորձով գիտենք որ մարդուս համար կը բաւէ քանի մը ստակ՝ որ մը ապրելու համար. և եթէ ձեռագործները աղէկ զարգացած լինէին, պիտի բաւէր նաև քանի մը դրամ զգեստեղինաց համար: Եւ սակայն կը տեսնենք մեր շուրջը պատած թշուառութեան և աղքատութեան մեծ ովկիան մը, և այս չարեաց մեծագոյն մասը առաջ կուգայ ոսկւոյ արժէից չափ լինելէն:

Իսկ տարրաբանից արուեստական միջոցով ոսկի գտնելու կերպը իմանալէն վերջը, ինչ յեղափոխութիւն որ պիտի ծագի անկից, անկարելի է գուշակել. բայց ինչ որ լինի, այս յայտնի է որ արժէից դրութեան կերպին վրայ ընդհանուր և հիմնական փոփոխութիւն մը պէտք է որ հասնի: Այլ միշտ հարկաւոր է միջոց մը կամ արժէ:

ից չափ մը գործոց բարեկարգութեան, բայց հարկ չի կայ որ ասի-  
կայ մետաղ մը կամ ուրիշ որ և իցէ բան մը լինի որ ըստ ինքեան  
արժէք մ'ունենայ, այլ բաւական է որ պայմանագրեալ որ և իցէ  
նիւթ մը լինի, ինչպէս է հիմա ընդունակութեան 4 տարածոցի և  
ծանրութեան ասանորդական չափուց գրութիւնը, Սակայն եթէ ու-  
ղենանք քննել թէ ինչ պէտք է լինի այս պայմանագրեալ իրը,  
խօսքերնիս շատ կ'երկըննայ, առ որ պէտք է նախ և առաջ աղէկ մը  
քննել հետազօտել քաղաքական անտեսութիւնը ամենայն պարա-  
գայիւք հանդերձ, զոր կը թողունք ընել և խորհրդածութեան առ-  
նույ իմաստնագունից:

## ՅՈՎՍԵԹ ՏԵ — ԱՄԵՋԵՐՍ

### ՄԱՆԿՈՒԹԻՒՆՆ

ԺՈՂՈՋՐԴԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԾԷՃ

(Տես յէջ 48)

### ԾՆՈՂՔ

**Ա**ՍՏՈՒԱԾԱՅԻՆ և մարդկային օրինօք ծնողաց աւանդեալ է  
իրենց զաւակաց խնամքն ու պահպանութիւնն, և ասոր համար  
կը պարտաւորին անդատին մատաղ հասակէն զանոնք առաքինու-  
թեամբ սնուցանել, բաւական չհամարելով միայն զմարմին զարգա-  
ցընել, զոր անբան անասունք ևս իրենց ծննդոց կ'ընեն:

Գլխաւոր փոյթերնէն մէկն ըլլայ պիտի հսկել զաւակաց առողջու-  
թեան վրայ, և հեռի բռնել անոնցմէ որ և իցէ մարմնոյ տնհան-  
գրստութեանց և թերութեանց առիթներն, որք յետոյ կրնան կենօք  
չափ վրանիս տիրապետել: Կենանքն արդէն իսկ այնքան տաժանա-  
կան է և լի թշուառութեամբ, քանի որ գեռ կը ժպտի մարդուս բո-  
լոր անձին քաղովութիւնն ու աշխուժութիւնը, մինչև կը ջանայ բը-  
նական ախտերով ձանձրութեանց և մեծագոյն վշտաց առջին առ-